

ցին հանդիսաւոր թաղումն ընելու : Արտի 16^ի իրիկուան գէմ, իբրև սոսկական մարդ մը սրբոյն Խնովիրիոսի եկեղեցին տարին, որ իրեն ծիրանաւորութեան տիտղոսն էր, և կտակովը իր գերեզմանը հօն էր որոշեր : Այս պզափեկեղեցւոյս մէջն է, ուր Խասսոյի ու կորները թաղուած են՝ հիմայ Ա' եծծո ֆանդիին անչոք գերեզմանն ալ :



ՀԱՅԻՆՈՍՈՒԹԻՒՆ



Աղիմպիական խաղերու Հրայ :

ԱՅս ամենայն կարգադրութեանց մէջ, որ մասնաւոր կերարով պատճառ եղան ազգութեան կապ մը տալու Հոյն ժողովրդոց, որոնք մէկմէկէ տարբեր էին բարքով և ծագմամբ և քաղաքական օրինաք, և բոլորովին հեռի Ազիադացւոց և Նրէից աստուածակետական միութենալութենէն՝ գլխաւոր պատճառ պէտք է սեպել ան հանդիսաւոր տօները, որոնց պատճառաւը մէկտեղ կը ժողովուէին մասնաւոր որոշեալ աստեն մը բոլոր Յունաստանի բնակիները : Նընուց ՚ի վեր Յունաստանի մէջ ամէն քաղաք խաղեր կ'ընէր և անոնց սկիզբը շատերը աստուածներէն հաստատուած կը սեպէին : Այս խաղերուն գլխաւորներն էին, Դակոփիսի Պիւթեան խաղերը, Ամեան խաղերը որ կ'ըլլար Արգոսի մէջ, Կորնթոսի Խաթմեան խաղերը, և ասոնցմէ ամենէն երևելին Աղիմպիական խաղերը :

Այս Աղիմպիական խաղերուն անունը Պինդարոս և երգիծաբանն Ուկիանոս Արամազդայ տրուած Աղիմպիական մականուանէն ելած կը սեպէն, իսկ աշխարհագիրն Արտաքրոն, և Վասենոփոն պատմագիրն Աղիմպիա տեղւոյ մը անուանէ, որ Պիսացւոց ձեռքն էր : Այս խաղին սկիզբը Արամազդայ կ'ընծայուէր իրեն Նոկայից վրայ ըրած յաղթութեանը յիշատակ . կամ Պիեղոպսին և Ներակլէսին, Պիեղոպսին պատուոյն

համար կամ ՚ի յիշատակ Աղիմպիական ստացած աւարներուն համար . բայց Ճմարիտը այս է որ այս խաղին սկզբը բնաւորութիւնը ժամանակին մթութեանը մէջ կորսուած է : Այս միայն յայտնի է որ Վրիստոսէ 884 տարի աւած գրեթէ բոլորովին մնացուած էին՝ եղբար Խփիտոս Լիգուրկոսի ժամանակակիցն, թերեւս յուսալով անովլ միաբանեցնել զատուած ցեղերը, նորոգեց գարձեալ այս խաղերը : Նարիւր ութիւր տարի վերջը առաջին անգամ սկսաւ յաղթուղներուն անունը գրուիլ հասարակաց գիւանի մէջ, և սկսաւ ան ատեն նոր թուական մը՝ այսինքն մէկ Աղիմպիական խաղէն ինչուան մէկալ խաղը համիել, և կ'ըսուեր Աղիմպիական թուական, և աս կրկին սովորութիւնը տեւեց Յունաց տէրութեան վերջանաւէն ետքն ալ :

Աղիմպիական խաղերը չորս տարին մէյմը կ'ըլլային, և հինգ օր կը տեւէին . առջի բերան մէկ հոգի մը միայն դատաւոր կը նստէր, վերջէն եղան երկու, տասուերկու, ութը, ինը և վերջապէս տասը ստիկան, որչափ թուով որ Խրիկան ըսուած ցեղեր կային, և ասոնք ունէին իրաւունք մէկ դատաւոր մը ընտրուելու : Այսոնք քանի մը օգնականներով որ իրենց պէս կ'ընտրուէին, խաղերուն սկսելին տասը ամիս առաջ, կը հոգային և կը կարգաւորէին խաղացողներուն հարկաւոր կրթութիւնները, և հանդիսին միջոցն իրենք հոգ կը տանէին պէտք եղած բարեկարգութեանց : Իրենք նաև զգեստնին մէկդի զրած դաւազան մը ձեռքերնին, կը դատէին խաղացողներուն քաջութիւնները և կ'որոշէին մրցանակները : Ունէ որ իրենց դատաստաննին մէջ վէճ մը ելլէր, Աղիմպիական սիւնհոգոսին կը ձգուէր դատը :

Ամէն Հոյն քաղաքացիք՝ թէ գաղթական և թէ տեղայի, թէ հասարակ մարդ թէ երեւելի, թէ աղքատ թէ հարուստ ամէնքն ալ կ'ընդունուէին աս խաղերուն հանդիսարանը : Բայտ Վասենոփոնի միայն մերժուած էին յայտնի

յանցանաց համար դատապարտեալները, և նաև անոնց ազգականները: Կանայք ալ առաջ հրաման չունեին, մասաւանդ թէ Եվեան օրէնք մը կար ինչպէս Պաւասանիաս կը յիշէ, որ կը հրամայէր բարձր ժայռէ մը վար ձգել այն ամենայն կնիկն որ անցած ըլլայ Ալփէոս գետը այն տօնին օրերը: Իսայց վերջերը կանայք ալ հրաման ունեցան ներկայ գտնուելու, և ինչուան նաև խաղի մէջ մտնելու:

Եշխարհքիս չորս կողմէն օտարականներ կու գային աս հանդէսը մտնալու: բայց քանի որ Յունաստան ազատ էր՝ օտարականք չկրցան կրկէսին մէջ մտնալ: Այրոր Աղեքսանդր Ա Ո'ակեդոնիոյ թագաւորը ուղեց ինքն ալ նահատակներէն մէկն ըլլալ՝ պարտաւորեցաւ հաստատելու թէ ինքը Հերակլեսին ցեղէն կ'իջնար, որ է նախահայր Տրովացւոց: Ամանապէս երբոր Յունաստան Հռովմայու գաւառ դարձաւ՝ Հռովմայ կայսերք և մանաւանդ Ա, Երոն, կերպ կերպ սուտեր հնարեցին զիրենք Հելլենական ցեղէ մը առաջ եկած ցուցընելու:

Այրոր հանդէսին առջի կրթութիւն ները լըմբնային որոնք որ տասը ամիս կը քչէին, և երդում կուտային ըմբիշները և իրենց աղգականները՝ որպէս զիամեննեին յաղթելու համար խարդախ հնարք մը չքաննեցընեն, և նաև ըստ արարողութեանց ողջակէզները մատուցանելէն վերջը աստուածոց, վիճակ կը ձգէին թէ ինչ կարգով առաջ երթան խաղողները, և ետքը խաղերը կը սկըսէին:

Ես խաղերը երկու կերպ էին, մէկ կերպը կը վերաբերէր մարմնոյ կրթութեանց, որ Յոյները կը կոչէին վարժական մրցմանք, ոմանք ալ Ո'ուսայից մրցանք կ'ըսուեին, և մոտաց կրթութե կը վերաբերէին: Աւջիններն էին Աղմակիական խաղերուն զլխաւոր մասը, ինչպէս Եւմեան և Խաթմեան խաղերը. և երկրորդները կը վերաբերէին աւելի Պիւթեան խաղարկութեանց: Այսայն Աղմակիականին մէջ բոլորն ալ թոյլ

տրուած էին և նաև կը վարձատրուէին: Ո'արմնոյ աշխուժութիւնը յայտնի կ'ըլլար ամենամարտիկ կրթութեանց մէջ, որոնք էին ցատքել, արշաւ, սկուտեղը խաղը, բոնամարտութիւն, ըմբշամարտութիւն, ասոնց հետ նաև նետնետելը և ձիրնթացը: Ո'կուտեղը կը թութութեան մէջ խաղողը իր բազուկը կրծից բարձրութերը բարձրացընելով և պտոյտ մը ընելով, ձեռքէն դէպ'ի վեր կը նետէր որչափկարելի է նէ բարձր՝ տեսակ մը կլոր տափակ և ծանր սկաւառակ մը կամ մարմին մը: Յունամարտութիւնն էր ջանալ բռամք մէկմէկու երեսը վիրաւորել: Ձեռուընին շատ հեղ կ'առնէին քարեր կամ մետաղի կտորներ, բայց կը պլէին կովու կաշիի մէջ և կը կապէին դաստակներուն չորս դին, որ կը կոչուէր բազպան: Ո'մբշամարտութիւնը կ'ըլլար երկու մերկ մարդկանց մէջ, որոնք մարմիննին խւղով կ'օծէին և բարակ աւազ մը կը ցանէին վրանին, ասոնք թևերնին մէկմէկու խառնելով կը ջանային կամ գետին ձգել մէկզմէկ, կամ ան աստիճան հասցընել գետինը զարնելու մօա՝ որ յաղթուողը ստիպուի ազատ մնալու շնորհք խնդրել:

Ձերնթացը կ'ըլլար կամ մէկ ձիով կամ երկու ձիով, որոնց մէկը կը տանէր զձիաւորը ինչուան նպատակը և մէկալը ինչուան արձակարանին տեղը. շատ անգամ ալ կառքերու լծելով երկու, իրեք կամ չորս ձի՝ կառարշաւ կ'ըլլար: Այսընթացից մէջ խաղողները չեն միայն կը ջանային մէկմէկու յաղթել երագութեամք, հապա նաև կառքին փառաւորութեամբը:

Դիմելու բան է որ Պինդարոս միայն կառընթացից յաղթողները կը գովիէ. պատճառն աս է որ ընչափաղց էր, միայն զանոնք կ'երգէր որ իրեն շատ ընծայ կուտային, անոր համար պէտք չէ զարմանալ իրեն նիւթոց միակերպութեանը վրայ, այսինքն գովիէլ միշտ Յունաց վարպետ ձի և կառք կառավարելը:

Ես մարմնոյ կրթութիւններէն վերջը երաժիշտք, բանաստեղծք, արհետականք, ճարտասամանք, ոլատմաբանք և

այն, իրենց մրցանքը կ'ընէին և կը պատ կուէին : Ողիմնիական խաղերու մէջ էր որ Երոդոտոս կարդաց իր սքանչելի ժամանակագրութիւնը, և թողուց մեզի գիրք մը որով կարենանք հին ատենական խառնակ և մութ պատմութիւնները կարգաւորեալ կերպով մը իմաստու . որով արթընցուց երիտասարդ թուկիտիդեսին ինչուան ան ատեն քնացած հանձարը, որ նոյն ատեն բոլոր հունաց հետ ականջ կը դնէր անոր զարմանալի սպատմութիւններուն :

Երբեմն Ողիմնիական հանդիսից ատեն զամազան քաղաքաց մէջ պատերազմները գաղրեցնելու դաշինքը կը հաստատուէին, և խաղաղութիւնը որոշուելէն վերջը սիւներ կը կանգնէին և վրան կը փորէին խաղաղութեան մեծ պայմանները : Հաղթողներուն փառքնու պատիւը խիստ մեծ էր, թէպէտ և պղտի բան մ'էր առած մրցանակնին, այսինքն պարզ շոճւոյ կամ ձիթենւոյ պսակ մը : Հանդէսը լըննալէն ետև երբոր իրենց հայրենիքը կը դառնային, քաղաքացիք յաղթական կառքին վրայ նստուցած կտրիծը քաղքին պարսպէն կտոր մը փլցընելով ներս կը մննէին աւելի փառք ընելու համար : Ի՞աղքէն ալ կ'ընդունէին մեծագին ընծաներ, ինչպէս հինգ հարիւր դրաքմէ . և Ամենքին մէջ իրաւունք ունեին առաջին տեղը նստելու ամէն հասարակաց ժողովոց մէջ, և տէրութիւնը իր ծախքովը կը պահէր զանոնք : Ոէ թէ մինակ յաղթողները՝ հասկա իրենց ընտանիքն ալ կ'ընդունէին պատիւներ և աղնուականութիւն :

Յօյները իրենց ազատութիւնը կորունցընելին ետքն ալ երկայն ատեն պահեցին իրենց Ողիմնիական խաղերը, իրրե յիշատակ մը իրենց անցեալ փառացը, և ներկայ թշուառութեանց մը խիթարանք . ինչուան որ կամաց կամաց դաղրեցան :

Այս քաջափառ յաղթողաց ասպարիզին մէջ երկու Արշակունի հայ թագաւորք ալ Հունաստանի ամենէն ե-

րեւելի կտրիչներուն հաւասար կամգերազանց քաջագործութեամբ պատուեցան . նախ մեծն Տրդատ՝ երրորդ դարուն երրորդ քառորդին, որուն համար կ'ըսէ ժամանակակիցն Դաթանգեղու՝ “ Ասե յուղմնիագուն Հունաց հսկայա, զօր երևեալ՝ բազում գործս արու, ” թեան և անդ ցացեալ, : Խակ լուրենացին՝ ողոմնիական խաղերուն հաստատուելուն պատմութեան հետ մէկ տեղ խառնելով այս յիշատակն՝ մթաքանութեամբ մը կ'ըսէ . “ Բստ Պիեղո, ” պինէսացոց մեհենական հրամանին Հիփիտեայ * ’ի մրցանակս ագոնին առաւելեալ քան զլիիտոսատրազոս Հոոդացի : . . . Եւ ’ի ձիընթացս մեծի կրկին կառավարել կամեցեալ, ’ի հմտութենէ հակառակազրին ոստուցեալ յերկիր անկաւ և բուռն հարեալ արգել զկառան, ընդ որ ամենէքին զարմացան, :

Երկրորդ՝ Ա արազգատ, հարիւր տարի Տրդատէն վերջը, որուն համար կը պատմէ լուրենացին . “ Ասխ ’ի Պիեսաս (Ողիմնիա) զբունամարտիկն յաղթելով, դարձեալ յԱրեգ քաղաքի լուրեացոց յօր հասարակի կոտորեաց զառիւծս, յորում փառս Ուլմակիայ խաղուն հանդիսի յըմբշամարտկացն երեկի և յարգի, : Այս վերջի խօսքերը թէպէտ և մութեն շարադրութիւնը այլայլած կ'երենայ,

* Եւսէքիոս Քրոնիկոն . . . “ Խիթասս որ նորոգեաց զագոնն : Սա էր Հեղինացի, և հանդերձապետ Եղագացոց աշխարհին՝ կամեցաւ ցածուցանել զմարտս քաղաքաց, ’ի բնաւ խակ Պեղոպոնէսայ առաքել տեսողս, որդ ուսանիցին զցածնուլ գրգռելոցն պատերազմաց : Դիցն հրամանքին էնչ այսակիսէ Պեղոպոնէսացուց : “ Մտէք ’ի մեհենան և զոհս մասուցէք, և հնազանդ լերուք ամենայնի՝ զոր ինչ իզգէն ձեզ հրաման սացեն, : Եւ Հեղիացոցն այսակիսի ինչ նախիդձիկս բարբառեալ թէ “ Հեղիացիք, որ զհարցն նախնեաց օրէնս հաստատուն պահէեալ ասրբեցուցէք զաշխարհդ ձեր, զոսն արարէք պատերազմաց, զհամօրէն բարեկամութիւնն ընդ Յոյնս կալայք . մինչ ’ի տանս տարեկանաց եկեսցէ ուրախութիւնն (Հինգամեայ) տարեկան : Եւ վասն այսորիկ Խիթասս պատուիրեաց գաշնաւորութեամբ հեռանալ ’ի պատերազմաց, և ուտել զեւրաքանցիւր խաղաղութեան կոտոր, հրաման առեալ ’ի հերակղեայ՝ ձեռնամուխ ’ի միմեանս ոչ լինել, :

բայց միտքը յայտնի է, թէ Ա արազդատ յաղթեց Արմավիական խաղերու մէջ և յաղթողներէն ալ գովութիւն առաւ : Վաղաքայ անուններն ալ հոս չենք ու զեր քննել : — Ո՞եր նպատակէն դուրս ըլլարով կը թողունք յիշելու հոս Ա արազդատայ և Տրդատայ ուրիշ շատ քաջագործութիւններն ալ թէ օտար երկիրներու մէջ և թէ 'ի Հայաստան : Ո՞եր ազգին պատմութեան մէջ կան շատ քաջաց ուժի նշանաւոր գործքերու յիշատակներ ալ, բայց ասոնց նման կամ աւելի՝ իրենցմէ առաջ Ա ահագնէն զատ կը յիշուի միայն Տողք Հայկազունը որ Ի՞նքեղ տան նահապետ եղաւ, Վրիստոսէ իբր 150 տարի առաջ՝ Ա աղարշակայ ատենը, որ է Ճծէ Արմավիադը . արդ մեր Խասեթեայ թարգմանութեան մէջ չեմ գիտեր դիպուածով թէ դիտմամբ՝ Ճծէ Արմավիադին՝ Ծրջանակաւ խաղին մէջ յաղթող կողոփոնացի մանկան անունը Ո՞սկոս դնելու տեղ՝ ինչպէս որ յունարէնը կ'ըսէ Ո՞սկոս՝ Հայերէնը դրած է Տորքոս . ժամանակն ալ յարմար կու գայ Տողքայ մանկութեանը :

ՏԻՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ



ԱՐՈՒԵՍՏ ԵՒ ՃԱՄՏԱՐՈՒԹԻՒՆ

Դէշ :

Այս Շ. Ա. ամենահարկաւոր գործոյ մը սկիզբը պէտք է որ շատ հին ըլլայ և գրեթէ մարդկութեան հասակակից : Ա ամս զի խորին հնութեան մէջ արեւելեայց, Խիպատացոց և Հնդկաց ծանօթ էր այս գործիս, և Տաճկաց աւանդութիւն մը կ'ըսէ թէ ասեղը Ի՞նովք հնարեց . միայն հնոց գործածած ասեղները հիմակուաններուն պէս կատարեալ չեն եղեր, այլ երկաթի մը կտորուանք էին :

Այս կարծուի թէ նորոց մէջ ասեղ շնուրու ճարտարութիւնը առաջին անդամ Ապանիացիք սկսեր են, վասն զի

ասկէ քանի մը հարիւր տարի առաջ վաճառականութեան մէջ եղած ասեղները իրենց անուամբը կը կոչուէին : Հիմայ մեծ յարգ ունին Ի՞նգղիոյ ասեղները, ուր մեծ հոգ կը տարուի այս ձեռագործիս, և զլխաւորապէս կը շնութիւն Հատըրակէճ՝ Տերպի կոմութեան մէջ, Աւորուիչ՝ Պիրմինկէմին և շրջակայիցը մէջ, և ՈՒշտիչ՝ Ուորչուդը կոմութեան մէջ :

Այս կերպով կը շինուի ասեղը : Ի՞նչ հաստութեամբ որ ասեղը կ'ուզեն՝ նոյն հաստութեամբ անուշ պողպատի թելեր կ'առնուն և երկու ասեղի երկայնութեամբ կը կտրատեն, և ամէնը մէկտեղ տրցակ կազմելով՝ երկու ծայրերը հինգ բթաշափ տրամագիծ ունեցող երկրթէ մանեակներու մէջ կ'անցընեն : Ասքը այս տրցակները թափծու երկրթէ սեղանի մը վրայ կը դնեն և երկրթէ տափկած գաւազանով մը ճզմելով զանոնք կը դարձընեն, որով պողպատէ թելերը կը շտկուին : Արողը այս կտորներէն տամնըութ կամ ինչուան քսանը տրս հատ մէկտեղ առած գայլախազէ պղտի յեսանաքարի մը վրայ չոր երկու ծայրերը կը սրէ : Այս գործողութեանս բաւական արագաշարժութիւն պէտք է, վասն զի սրողը պիտի նայի որ ամէն կտորուանքն ալ հաւասարապէս դպինյ յեսանաքարին :

Ասեղները այսպէս չոր յեսանի վրայ սրուելուն համար է որ ասեղ սրելու արուեստը առողջութեան վնասակար է . վասն զի սրողը շնչելու ատեն օղին հետ մէկտեղ կը շնչէ նաև պողպատի փոշիներն ալ՝ որ գործողութեան ատեն օղուն մէջ կը թռչին : Բայց այս վնասիս զէմն առնելու համար մագնիսուտ մետաղի թեւերով շնուռած դիմակ հնարուած է որ գործաւորին բերանը կը պաշտպանէ . վասն զի մագնիսը պողպատին փոշիները իրեն քաշելով չետողուր որ օգուն հետերանը մննեն, բայց ասեղ սրողներուն շատը այս դիմակը չեն գործածեր :

Այսքար այս կտորները կը սրուին՝ մէջ տեղէն կը կտրատեն և մէկը երկու մատին ծայրերով չորս հինգ մը մէկտեղ ա-